

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ԾՐԱԳԻՐ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ - դատավորներ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿ - հեռաուսուցում

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԿԱՏՎԱԾ - սեպտեմբեր - նոյեմբեր

ՈՒՍՈՒՑԱՆՈՂ / ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ - Սերգեյ Մեղրյան

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի փետրվարի 9-ին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված ներկայումս արդիականություն է ստանում այնպիսի հարցերի լուսաբանումը, որոնք Հայաստանի քաղաքացիադատարական օրենքում կարգավորվել են նորովի կամ որոշակի առումով նորույթ են:

Այսպես, լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն հիմնական ուղղությունները, որոնցով նոր դատավարական օրենսդրության շրջանակներում փորձ է կատարվել բարձրացնելու արդարադատության արդյունավետությունը: Այդպիսիք են .

1. գործը դատաքննության նախապատրաստելու փուլը և դատարանի կողմից ընդունվող միջանկյալ դատական ակտերը,
2. վեճերի լուծման այլընտրանքային միջոցներին առնչվող կարգավորումները,
3. պարզեցված ընթացակարգերը,
4. կորպորատիվ և առանձին աշխատանքային վեճերի լուծման առանձնահատկությունները:

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Մույն դասընթացը նպատակ ունի ունկնդիրներին ապահովել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նորագույն ինստիտուտների և կարգավորումների, ինչպես նաև քաղաքացիական դատավարության արդյունավետության բարձրացման ուղղությունների վերաբերյալ բազմակողմանի

գիտելիքներով և տեղեկություններով, որոնց կիրառումն անհրաժեշտ է արդարադատությունն արդյունավետ իրականացնելու համար:

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (նշել այն հիմնական գիտելիքներն ու/կամ հմտությունները, որոնց պետք է տիրապետի ունկնդիրը՝ դասընթացին հաջող մասնակցության դեպքում)

Մասնակցելով դասընթացին, ուսումնասիրելով առաջարկվող լրացուցիչ նյութերը և պատասխանելով ինքնաստուգիչ հարցերին՝ ունկնդիրը կկարողանա.

- պլանավորել և ակտիվորեն կառավարել գործը դասաքննության նախապատրաստելու փուլը՝ հստակ գիտակցելով գործի նախնական լսումների ընթացքում դատարանի առաքելությունը.
- սահմանազատել այն գործերը, որոնցով նախնական դատական նիստ նշանակելը պարտադիր է, այն գործերից, որոնց շրջանակներում նախնական դատական նիստի կառուցակարգի կիրառումը դատարանի հայեցողական լիազորություն է.
- մատնանշել նախնական դատական նիստի ընթացքում կատարվող դատավարական գործողությունների նպատակները, ծավալը և բովանդակությունը.
- ճիշտ կազմակերպել ապացույցները նախնական դատական նիստում հավաքելու, դրանց վերաբերելիությունը և թույլատրելիությունը գնահատելու գործընթացը.
- վեր հանել այն իրավիճակները, երբ վարույթի ընթացքում հակընդդեմ հայց չներկայացնելը պատասխանողի համար կարող է առաջացնել անբարենպաստ հետևանքներ.
- սահմանազատել եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերը՝ բացահայտելով վերջիններիս ձևին, բովանդակությանը, ներկայացվող պահանջները և բողոքարկելիության հիմունքները.
- պարզաբանել վեճերի լուծման այլընտրանքային միջոցների դերը և նշանակությունը՝ հստակ ցույց տալով դրանց վերաբերյալ համապատասխան համաձայնության ազդեցությունը դատական վարույթի վրա.
- ներկայացնել արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ դիմումներով վարույթների առանձնահատկությունները.

- որոշել այն գործերի շրջանակը, որոնցով մեծ է վեճը հաշտությամբ ավարտելու հնարավորությունը՝ ցույց տալով այն չափորոշիչները, որոնցով դատարանը կարող է վեր հանել կողմերի շահերի ընդհանրությունը, և այն դատավարական հնարքները, որոնցով այդպիսի ընդհանրություն ունեցող կողմերը կարող են մղվել հաշտության.
- սահմանագատել Օրենսգրքով նախատեսված պարզեցված ընթացակարգերը՝ հստակ պատկերացում ունենալով այն մասին, թե տվյալ հանգամանքներում այդ վարույթներից որն է ենթակա կիրառման.
- լուսաբանել այս կամ այն պարզեցված ընթացակարգի շրջանակում կատարվող դատավարական գործողությունների ծավալը և բովանդակությունը.
- ներկայացնել հատուկ հայցային վարույթի կարգով քննվող աշխատանքային վեճերը՝ պարզաբանելով դրանց հարուցման, նախապատրաստման և քննության առանձնահատկությունները.
- պլանավորել առանձին աշխատանքային վեճերի քննությունը՝ հստակ գիտակցելով դրանց շրջանակում դատարանի առաքելությունը և «ի պաշտոնե» գործելու սահմանները.
- ներկայացնել հատուկ հայցային վարույթի կարգով քննվող կորպորատիվ վեճերի շրջանակը, վեճն այդպիսին ճանաչելու չափանիշները.
- պլանավորել առանձին կորպորատիվ վեճերի քննությունը՝ հստակ գիտակցելով դրանց շրջանակում դատարանի և այն իրավաբանական անձի առաքելությունը, որի առնչությամբ գործը քննվում է դատարանում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ (նշել այն առանցքային գաղափարները կամ թե մաները , որոնք ներկայացվելու են հեռաուսուցման դասընթացում . դրանք կարող են արտահայտված լինել դասընթացի ելքային արդյունքներում , բայց կարող են լինել նաև լրացուցիչ հասկացություններ)

Մույն հեռաուսուցման դասընթացի հիմնական գաղափարները ներկայացվելու են համապատասխան դասերի / շաբաթների համար նախատեսված նյութերում: Ստորև հաջորդաբար ներկայացված են յուրաքանչյուր դասի / շաբաթվա նյութերում տեղ գտած հիմնական գաղափարներին վերաբերող թեմաները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ԴԱՍ 1. Գործը դատաքննության նախապատրաստելիս վարույթի ակտիվ կառավարումը և պլանավորումը: Նախնական դատական նիստ նշանակելը, նախնական դատական նիստում լուծման ենթակա հարցերի շրջանակը

ԴԱՍ 2. Հակընդդեմ հայցի հարուցման հիմքերն ու դատավարական կարգը և այն չհարուցելու իրավական հետևանքները

ԴԱՍ 3. Դատարանի կողմից ընդունվող միջանկյալ դատական ակտերը և դրանց բողոքարկումը

ԴԱՍ 4. Արբիտրաժային համաձայնության առկայության պայմաններում վեճը դատարանի կողմից քննելու հնարավորությունները: Արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթները

ԴԱՍ 5. Հաշտարարությունը ՀՀ-ում: Դատարանի կողմից նշանակվող հաշտարարությունը և դրա պարտադիրության ու կիրառման շրջանակների ընդլայնումը որպես հաշտարարության ինստիտուտի զարգացման եղանակ

ԴԱՍ 6. Հեռակա դատաքննության կիրառման հիմքերը և դատավարական կարգը

ԴԱՍ 7. Պարզեցված վարույթի կիրառման հիմքերը և առանձնահատկությունները

ԴԱՍ 8. Արագացված դատաքննության կիրառման հիմքերը և առանձնահատկությունները

ԴԱՍ 9. Առանձին աշխատանքային վեճերով քննության առանձնահատկությունները

ԴԱՍ 10. Կորպորատիվ վեճերով գործերի քննության առանձնահատկությունները

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (նշել այն մեթոդները կամ միջոցները, որոնց կիրառումը կնպաստի հեռաուսուցման դասընթացի բովանդակության հասկացմանը: Օրինակ՝ վարժություններ, ինտերնետ ֆորումներ, վիրտուալ քննարկումներ և այլն:)

Հեռաուսուցման դասընթացների պատշաճ հասկացման համար կիրառական նշանակություն ունի ինքնաստուգիչ հարցերի և առաջադրանքի մշակումն ու ներդնումը: Ինքնաստուգիչ հարցերին պատասխանելու և առաջադրանքը կատարելու միջոցով ունկնդիրները հնարավորություն են ստանում առավել խորությամբ հասկանալ ինչպես համապատասխան տեքստը, այնպես էլ դրա կիրառական արժեքը (օրինակ՝ առաջադրանքի պատշաճ կատարման համար տեքստի հասկացումը պարտադիր է):

Մույն հեռաուսուցման դասընթացի համար նախատեսվում է ինքնաստուգիչ հարցերի՝ որպես նյութի ընկալմանը նպաստող մեթոդի/միջոցի կիրառումը, ինչպես նաև դասընթացին վերաբերող գծապատկերների տրամադրումը և տեսահոլովակների ցուցադրումը:

ՏԵՄԱԶԱՅՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

(Նշել հեռաուսուցման դասընթացի իրականացման համար անհրաժեշտ տեսաձայնային սարքավորումները: Օրինակ՝ համակարգիչ, պրոյեկտոր, DVD և այլն)

Հեռաուսուցման դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ են՝

1. Համակարգիչ (ունկնդրելու հարմարություններով)
2. Համացանց մուտք գործելու հնարավորություն

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱԶԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ (նշել այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են հեռաուսուցման դասընթացի յուրացման համար)

Տվյալ դասընթացի թեմաների յուրացման համար անհրաժեշտ են իրավագիտության, մասնավորապես՝ քաղաքացիական դատավարության ոլորտի հիմնարար գիտելիքներ:

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Հեռաուսուցման դասընթացի ժամանակացույցը մանրամասն ներկայացված է ուսուժական պլանում: Հեռաուսուցման դասընթացի ընդհանուր տևողությունը 10 շաբաթ է (յուրաքանչյուր շաբաթ 4 ժամ ծավալով, ընդհանուր 40 ժամ ծավալով):